

ՏՓԻԻՍՈՒԻ ՀԱՅՈՒՆՆԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՒԻԸ.

Օ Ր Ա Գ Ի Ր

1885 թ. Մարտի 31-ին Մոզնեոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ Ս. Գայի անեան ուսումնարանի գաշխիճում՝ նախագահութեամբ վիճակիս Դերասպետի Ա. Աաջնորդ Սրբազան Արիւտակէս եպիսկոպոսի կայացաւ Հայուհեաց բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, ժողովին ներկայ էին ընկերութեան 33 անդամ:

Սոյն ժողովին ընկերութեան վարչութիւնը՝ համաձայն կանոնադրութեան 29 յօդուածի ներկայացրեց ի քննութիւն և ի հաստատութիւն 1884 թ. ելեւմտից հաշիւը և 1885 թ. նախահաշիւը: Սոյն հաշիւները քննելուց առաջ վարչութեան անդամ Տ. Սրբուհի Երիցեանը կարգաց վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը, որից երևեցաւ, որ վարչութիւնը սոյն տարի գլխաւորապէս ուշադրութիւն էր դարձրել նորա հսկողութեան ներքոյ գտնուող Ս. Նշան եկեղեցւոյ օրիորդաց դպրոցի յառաջադիմութեան վերայ: Սեպտեմբեր ամսից վարչութիւնը, ինչպէս յայտարարած էր անցեալ տարի, ընդարձակել է դպրոցը, ընդունելով նորա մէջ կրկին 10 աշակերտուհի որոնց հետ բոլոր աշակերտուհիների թիւը դպրոցի մէջ հասել է 30-ի: 2-րդ յիշով որ աշակերտուհիների թիւի հետ պէտք է աւելանար ուսումնական պիտոյից, ձեռագործի նիւթերի ու կարասիքի ծախսերը, այնուամենայնիւ դպրոցի ծախսը նախահաշուում նշանակուած 2000 ուրախ գումարից պակաս է եղել: Այս հանգամանքին գլխաւորապէս նպաստեց ինքը վարչութիւնը շնորհիւ իւր անտեսութեան և մասնաւոր ներդրման հոգեւոր Գարանցի Հոգաբարձութիւնը, որ տուել էր նորան 62 ր. ուսումնական պիտոյք աշակերտուհիներին բաժանելու համար հանգուցեալ Էֆէնդեանի կտակաւոր գումարից: Ս. Գայի անեան ուսումնարանի վարչութիւնը, որ ընծայել է գրասեղաններ և օրֆեթեան Խիթարեանը, որ նուիրել է մի դասական գրատախտակ:

Սոյն միջոցին ընկերութեան գումարից վարչութիւնը տուած է միանուագ օժանդակութիւն՝ Զրկինեանց Ս. Վարապետ եկեղեցւոյ ուսումնարանին 100 ր. Հաւլարարի Ս. Մարիամեան ուսումնարանին 50 ր. և Ծղէթ գիւղի ծխական դպրոցին 25 ր. բացի սորանից նա նպաստել է Ախալցխայի օր. Սօֆիա Ոսկանեանին սովորելու երաժշտութիւն կայսերական Ռուսաց երաժշտական ընկերութեան Թիֆլիզի բաժնի մէջ: սկզբում վճարելով նորա համար ուսման վարձը և ապա միջնորդելով ուսուցանել նորան այնտեղ այդ արհեստը ձրիաբար: միևնոյն ժամանակ վարչութեան խնդիրքի համաձայն Հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը վճարել է յիշեալ օրիորդի համար նոյն բաժնի վարչութեանը դաշնամուրի վերայ ամբողջ վարձը:

Թէև վարչութիւնը անցեալ տարի ստացել է ընդհանուր ժողովի համաձայնութիւնը ընկերութեան գումարից 200 ր. գործ դնել Ս. Նշան եկեղեցւոյ գաւթում մի դպրոցական շինութիւն կառուցանելու համար և Սրբազան Առաջնորդի հրամանաւ ստացել էր այդ գործի համար Ս. Նշան եկեղեցւոյ 2000 ր. և մասնաւոր հանգանակութեամբ ժողոված 160 ր. սակայն նա իսկոյն ձեռնամուխ չէ եղած այդ գործին և միայն ներկայ տարուայ Փետրեւր-վարին սկսել է փորել տալ շինութեան հիմքը և գործը կիսատ է մնացել Հայոց դպրոցների մասին կայացած նորագոյն կարգադրութեան պատճառով: Վարչութիւնը մտադիր է ապագայում իրագործել այդ նպատակը, իսկ այժմ որոշել է միայն հիմք ձգել և մի թեթեւ պատ կանգնացնել այդ տեղում մինչև որ Հայոց դպրոցների մասին նոր կարգադրութիւն կրկինի:

Վարչութիւնը առանձին շնորհակալութիւն է յայտնում պ. բժշկապետ Գաւիթ Օրբէլուն, որ ձրիաբար շարժմը մի անգամ այցելում էր Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցը և իւր խորհուրդներով նպաստում էր դպրոցի առողջա-

պահական մասին. նա և արժանապատիւ Յովսէփ աւագ քահանայ Օրբէլուն, որ ընծայեց վարչութեան իւր հեղինակութիւնից. «Քրիստոնէական նախաշաւիղ» գրքի 50 օրինակ. պ. պ. Մարկոս Դոլուխանեանին և Նիկողայոս Մեղունեանին, որոնք նուիրեցին «Աղբիւր» ամսագրի տարեկան մի մի օրինակ, որոնցից մի օրինակը վարչութիւնը ուղարկել է Ծղնէթ գիւղի ուսումնարանին. իսկ միւսը Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցին, ներսիսեան հոգևոր Դպրանոցի Հոգաբարձութեանը և բոլոր այն անձանց որոնք նպաստել են վարչութեան իւրեանց միանուագ օժանդակութիւններով:

Ի վերջոյ տեղիկագրի մէջ յայտարարուեցաւ որ անցեալ տարի Մարտի 7 ին՝ վարչութեան նոր կազմակերպութեան պատճառով, ընտրուեցան՝ վարչութեան Ատենապետուհի Տ. Մարիամ Խատիսեան, փոխ-Ատենապետուհի Տ. Նազեժդա Ալիխանեան և գանձապետուհի Տ. Վարվառէ Ռօտինեան և որովհետև վարչութեան անգամ Տ. Մարիամ Խոսրովեանը հրաժարուեցաւ անդամակցութիւնից, ուստի նորա տեղ հրաւիրուեցաւ փոխ-անգամ օր. նատալիա Տէր Յովհաննիսեան. Վարչութիւնը այս տարի ունեցել է 35 նիստ. ամառային 2 ամիս արձակուրդ ունենալով:

Այնուհետև վարչութեան Ատենադպիրը կարդաց 1884 թ. Մարտի 1 ից մինչև 1885 թ. Մարտի 1 ն ընկերութեան ելևմտից հաշիւը, որից երևեցաւ որ տարուայ ընթացքում մուտք եղել է՝ 6 մշտական անգամի վճարը 600 ա. 160 իսկական անգամի վճարը 960 ա. զանազան անձինքներից նուիրաբերութիւնները 108 ա. 3 պարահանգիսի արդիւնքը 1817 ա. 40 կ. ընկերութեան գումարի տոկոսիք 444 ա. 35 կ. Ս. Նշան եկեղեցւոյ նպաստը յօգուտ դպրոցի 100 ա. և դպրոցի աշակերտուհիների ձեռագործի վաճառումից արդիւնք 21 ա. 45 կ. ընդ ամէնը մուտք եղել է 4051 ա. 20 կ. բացի սորանից ընկերութիւնը ունէր՝ դրամով 2785 ա. 90 կ. և արժէտոմներով 4049 ա. 56 կ. գումար 10,886 ա. 66 կոպէկ: Սոյն միջոցին ծախս եղել է՝ դիւանական և մանր ծախսեր 49 ա. 35 կ. Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի պահպանութեան 1669 ա. 39 կ. միանուագ օժանդակութիւն ուսումնարաններին և մի օրիորդի երաժշտութիւն ուսանելու համար 206 ա. 55 կ. ընդ ամէնը ծախս եղել է 1925 ա. 29 կ. ընկերութիւնը առ 1 ն Մարտի 1885 թուի ունի՝ մի տոմսակ Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութեան 500 ա. արժողութեան, որ գնուած է 346 ա. 39 կ. Արևելեան փոխառութեան տոմսակներ 1500 ա. արժողութեան, որ գնուած է 1322 ա. 71 կ. չորս տոմսակ Թիֆլիսի Աղնուական բանկի 3000 ա. արժողութեան, որ գնուած է 2526 ա. 85 կ. մի տոմսակ առաջին ներքին փոխառութեան 100 ա. արժողութեան և մի տոմսակ Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութեան ընդունուած իրրև 100 ա. ուրեմն արժեւորմանով ունի 4395 ա. 95 կ. (իսկական գնով 5200 ա.): Ասեւորական բանկում՝ ընթացիկ հաշուով 4461 ա. 68 կ. և առձեռն գումար 103 ա. 74. բոլորը ունի դրամագլուխ և զուտ գումար 8961 ա. 37 կ.:

Ընդհանուր ժողովը սոյն ելևմտից հաշիւը հաստատեց: 1885 թուի նախահաշիւը ընդհանուր ժողովը ընդունեց և որոշեց Սեպտեմբերին արտաքոյ ընդհանուր ժողով հրաւիրել նոր նախահաշիւ կազմելու համար:

Ժամի 2ին կէսօրից յետ Սրբազան Նախագահը դոցեց նիստը:

Ատենադպիր Ա. Քիշմիշեանց.